

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պ. ՔԱՂԱՔԱՐՅԱՆ

Կ Ե Ր Ա Զ Ա Տ Ը Ը  
ՅԵՎ. ՆՐԱ. ԳՈՐԾՎԵԼԻԹՅԱՆԵ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԵԶ.

БИБЛІОТЕКА  
ІНСТИТУТА  
ВІСТОКОВДЕННЯ  
Академії Наук  
ССР



ԳՐԱԴԱՐԱՆ

1932

Ե Ր Ա Տ Ը Ը

631.8  
к-14

СА 149

Գ. ՔԱՂԱԿԱՐՅԱՆ

Կ Ե Ր Ա Զ Ա Տ Ը  
ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԻ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ПОСТОНОВДЕНИ  
Академии Наук  
СССР



ՀՀ-33300

17. 465

30 JUL 2010

29 AUG 2011

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Պացիալիստական վերակառու ցման լենթարկվագ մեր գյուղատնտեսության քիմիաց և պահանջմանը բարարելու և նողի բերքն ապահովելու համար Խորհրդային իշխանությունը, ինչպես հարամի էն, Ղարաքիլիսալում արդեն կառուցում ե քիմիական պարարտանկութերի գործարան, զորն արա աարի արդեն կավարտվի և ինկող գալնանացանին մեր գյուղատնտեսությանը կտա վորոշանուեկի պարարտանյութ:

Սակայն գետք ե ասել, վոր մեր ազգունումներից շատերը, և մանավանդ մեր կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների ակտիվը արհեստական պարարտանկութերի գործածության հետ այդ գործի նորության պատճառով, այնքան ել մոտ ծանոթ չեն, մանավանդ կիրագոտի գործածությանը, վորոշիսի պարարտանկության հանդիսանալու էն Ղարաքիլիսալի գործարանի արտադրությունը:

Իսկ ամեն մի պարարտանյութ այն ժամա-



59638-66

Հանձնված է արտադրոյան 21/II 1932 թ. Ա. Ֆ. Բ.  
Տպագրված է 8/III 1932 թ.

նակ և բուլսերը լրիվ ոգտագործում և հողերի բերքատվությունը բարձրացնում, լեթե մենք հողերի պարարտացումը կատարում ենք կանոնավոր կերպով, հաշվի առնելով այդ նյութերի առանձնահատկությունները, նրանց կրած փոփոխությունները հողի մեջ և նրանց ազդեցությունը հողերի և բուլսերի վրա։ Սյու տեսակետից առանձնահատուկ տեղ ե գրավում կիրազուր, փորը նախ քան բուլսերի կողմից ոգտագործվելը, հողի մեջ մի շարք բարդ քիմիական փոփոխությունների և լենթարկվում և այդ փոփոխությունների հաջող և արագ ընթացքից ե կախված կիրազութիւնը ազդեցությունը հողի բերքատվության վրա։ Սակագ չեն այն դեպքերը, լերք կիրազութիւնը կամ և անժամանակ գործածության հետևանքով փոխանակ հողի բերքն ավելանալու, նազգալիորեն պակասում ե, սինէղեռ առհասարակ կիրազութ հանդիսանում ե ամենալավ պարտականություններից մեկը։

Մյուս կողմից պետք ե ասենք, զոր կիրազութը լուր արդյունաբերության սկզբնական շրջաններում վորոշ դժվարությունների լե հանդիպել հատկապես գյուղատնտեսների գեպի այն բացասարար վերաբերվելու շնորհիվ, վորը լուր արտադրությունն ե գտել նաև շատ տաքած ված պարարտացման վերաբերյալ դասագրքերում։

Նման վորոշ վերապահ վերաբերմունք գոյություն ունի նաև մեր ազգության երի շրջանում, վորը մեծ չափով հետևանք ե այդ պարարտանյութին անձանոթ լինելուն։

Սույն գըքույկի նպատակն ե ծանոթացնել մեր ազգության երին, կոլեկտիվ և խորհրդակին տնտեսությունների ակտիվին և գյուղատնտեսական տեխնիկումների ու Բուների ուսանողությանը կիրազութիւնների, նրա գործածության ձեների և նրա ազդեցության հետո Դրանով նրանք ննարավորություն կունենան ավելի մեծ հաջողությամբ ոգտագործել այդ պարարտանյութը մեր սոցիալիստական գյուղատնտեսության վերակառուցման և նրա վերելքի գործում։

Պ. Ք.

## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Ի Թ Յ Ո Ւ Ի Ն

Բուլսերի մարմիի  $2/3 - 3/4$  բաղկացած ե  
ջրից, վորը բուլսերն ստանում են հողից, Զոր  
նլութերի կեսից ավելին ել բաղկացած ե ածխա-  
ծինից, Բուլսերն ածխածին վերցնում են ողի  
ածխաթթվից ( $CO_2$ ) և կանաչ քլորօֆիլի հա-  
տիկների մեջ՝ արևի ճառագալթների միջոցով՝  
ածխածինը միացնում են հողից վերցրած ջրի  
հետև դարձնում են որգանական նյութեր—շաքար,  
ուլա և ալին, Բուլսերն իրենց մեջ պարունակում  
են նաև բավականի քանակությամբ ազոտ, վորը  
նրանք նույնպես հողից են վերցնում։ Վերոհի-  
շալ նյութերից բացի, բուլսերը հողից վերցնում  
են նաև վորոշ քանակությամբ մոխրային նյու-  
թեր, վորոնք բուլսերն ալրելուց հետո, մնում են  
վորպես մոխիր։

Բոլոր հողերը, շատ թե քիչ չափով, աղքատ  
են ազոտից, ու թեև հողի մեջ ապրում են մի  
շաքար անտեսանելի միկրոսկոպիական որգանիդ.

մեր, վորոնք ընդունակ են ձթնոլորտի ազոտն ոգտագործելու իրենց անդառության համար, վորն արդ որդանիզմների մեռնելուց հետո կանաչ բույսերին ե բաժին ընկնում, ուստի հողի բերքը բարձրանալու համար անհրաժեշտ ե արդ աննդանութը մտցնել հողերի մեջ վորպես ընական կամ արհեստական պարարտանյութ:

Յեվ իրոք, անցրալ տարեսկզբին Յեվրոպայի գարգացած գլուզատնտեսություն ունեցող յերկիրներն սկսեցին ուժեղ կերպով իրենց հողերը պարարտացնել գոմաղբով. Դրա, ինչպես և հողի մշակություն ուացիոնալ ձևերի կիրառման շնորհիվ, նրանց հողերի բերքատվությունը համարյա կրկնապատկվեց. Բայց շատ շուտով պարզվեց, վոր գոմաղբի մեջ՝ պարունակվող ազոտը, հողից առավելագույն բերք ստանալու համար՝ բավական չե և սկսեցին գործածել, ալսպես կոչված, արհեստական կամ քիմիական պարարտանյութեր՝ առաջին հերթին Զիլիական սալպետեր (սելիտր), ապա նաև ամմոնիում սուլֆատ. Վերջնս ստացվում եր քարածուխից՝ կոքս և վառելու գազ պատրաստելու ժամանակ. (Այժմ ամմոնալֆատ մեծ քանակությամբ պատրաստվում ե արհեստական կերպով – մթնոլորտի ողից):

Արհեստական պարարտանյութերի՝ հատկապես ազոտ պարունակող պարարտանյութերի գոր-

ծածությունն անցյալ դարի վերջին յերկու տասնամյակում այնպիսի հսկայական չափերի հասավ, վոր արդեն սկսեցին յերկուող կրել, թե շուտով Զիլիի հանքերը կարող են սպառվել և յեթե տեխնիկալին չհաջողվի ողի մեջ գտնվող ազոտի անսպառ պաշարը ոգտագործելու. միջոցներ գտնել ապա կարող ե առաջանալ ազոտի մեջ պակաս և բերքի այնպիսի անկում, վոր համատարած սովոր յերկրագնդի վրա անխուսափելի էլինի:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին սկսվեց մի տեսնդային աշխատանք՝ մթնոլորտի ազոտի ոգտագործման մեթոդներ փնտռելու ուղղությամբ, ավելի ճիշտ՝ մթնոլորտի ազոտը կապելու վերաբերմամբ մինչ արդ յեղած դիտողություններին և գրուտերին տեխնիկական ձևակերպումն տալու: Յեվ 1905 թ. յերկու Նորվեգիացիների՝ Բիրկելանդին Ելդեին հաջողվում ետեխնիկալում ոգտագործել դեռ 18-րդ դարում Կավենդիշի այն դիտողությունը, վոր ելեկտրական կայծի ազդեցության տակ ողի ազոտը և թթվածինը միանալով միմյանց հետ տալիս են ազոտ ոքսիդ — NO. Այս գլուտը տեխնիկապես իրացնելու համար հիմնվում են մի քանի գործարաններ, ուր ելեկտրական բոցի մեջ ( $3000^{\circ}\text{C}$ ) ոքսիդանում ե ողի ազոտը, վորից ստացվում ե ազոտական թթու և ապա կալցիում սալպետեր  $\text{Ca}(\text{NO}_3)_2$ ,

կամ այսպես կոչված, Նորվեգիական սալպետեր:

Ապա 1906 թ. լերկու գերմանացի ըիսիկոներ՝ Ազոլֆ Ֆրանկի և Նիկողեմ Կարո, Խոտիլիալում հիմնում են մի գործարան, վորտեղ ողի ազոտը կապվում ե կալցիում կարբիտի հետ և ստացվում ե մի այլ պարարտանյութ՝ կիրազու  $\text{CaCN}_2$  (կալցիում ցիանամիտ),

Այս պրոցեսն իրեն հերթին հիմնվում եր այն դիտողության վրա, վորը գեռ 1869 թ. արել եր Բունզենը, այսինքն՝ լերը մաքուր ազոտն անց կացնենք շիկացրած ածուխի և հիմքերի խառնուրդի միջով, կստացվեն ցիանի միություններ: 1895 թ. Ֆրանկը և Կարոն ցուց տվին, վոր լեթե տաքացրած բարիում կարբիտի միջով անց ենք կացնում ազոտ՝ ստացվում ե հետևյալ ֆորմուլայի Բա  $\text{C}_2 + \text{N}_2 = \text{Ba} (\text{CN})_2$  բարիում ցիանիտ:

Նույն արդ վորձը նրանք կրկնեցին տվելի եժանագին կալցիում կարբիտի վրա, բայց այս անդամ կալցիում ցիանիտ չստացվեց, այլ ցիանի մի այլ միությունը — կալցիում ցիանամիտ  $\text{CaCN}_2$ :

Ահա այս գրուտի վրա հիմնված՝ նրանք 1906 թվին Բատակալում կառուցեցին կիրազուի առաջին գործարանը: Իրանից հետո արդեն ազոտի արտադրության այս ձեր բավականին լայն ծավալ ստացավ և 1913 թ. ինը զանազան պե-

տություններում աշխատել սկսեցին մի շաբք գործարաններ, վորոնք միասին տարեկան արտադրում ելին 172.000 տոնն կիրազու կամ 34000 տոնն կապված մաքուր ազոտ:

Պատերազմի ժամանակ կիրազուի արտադրությունը հակալական չափերի հասավ, մանավանդ, լերք հաջողվեց կիրազուից մշակել ամմոնիակ և վերջինից ազոտական թթու ստանալու ձեր, վորը մեծ չափերով արտադրվում եր ու ազական կարիքների համար: 1918 թ. գործում ելին 36 գործարան հետեւյալ լերկըներում և տարողությամբ<sup>1/</sup>:

Ցերկներ	Գործառնութեաթիվ թիվը	Մաքսիմալ արտադրությունը տոններուակ	
		Կիրազու	Կապված ազոտ
Ցերմանիա	7	600,000	120,000
Ավստրիա	2	110,000	22,000
Ֆրանսիա	9	290,000	58,000
Նորվեգիա և Շվեյցարիա	4	140,000	28,000
Խոտավիա	5	90,000	18,000
Շվեյցարիա	3	35,000	7,000
Կանադա	1	60,000	12,000
Ճապոնիա	4	200,000	20,000
Միացյալ Նահանգներ	1	200,000	40,000
Ընդամենը		1625,000	326,000

<sup>1/</sup>) Grossmann: Stickstoffindustrie und Neltnirfschaft, 1926.

Գատերազմը վերջանալուց հետո այդ գործարանների արտադրած կիրազոտը համարյա ամբողջովին սկսեցին գործադրել գլուղատնտեսության մեջ։ Ու քանի վոր գլուղատնտեսությունը ալդպիսի քանակությամբ կիրազոտ գործածել չեր կարող, ուստի գործարաններն ստիպված յեղան վորոշ չափով կը ճատել իրենց արտադրությունը։ Սակայն վերջին տարիները նրանց արտադրությունն սկսեց նորից բարձրանալ (թե հին գործարանների բեռնվածության մեծացման և թե նորերը հիմնելու միջոցով) և աժմ կիրազոտի արտադրությունը հասել է 1928 թ. 1,097,800 տոննի, վորն արտադրվում ե հետեւալ յերկրներում <sup>1/4</sup>.

### ԿԻՐԱԶՈՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՆՆՈՎ

Ց Ե Ր Կ Ե Ր	Կ Ի Ր Ա Պ Ռ Ո Մ
Գերմանիա	465,000
Ֆրանսիա	55,000
Իտալիա	54,900
Նորվեգիա	17,000
Շվեդիա	28,000
Շվեյցարիա	12,400
Չինուլովակիա	25,000
Լիհաստան	139,000
Կանադա	148,000
Ճապոնիա	102,000
Ռումինիա	19,500
Յուգոսլավիա	32,000

<sup>1/</sup> Noncāmr: vandvuch der Rfvansenenesnahrunq und Dünqunq 1931.


Վերոհիշյալ յերկրների գործարանների թվին այս տարվանից ավելանալու յենաև Խորհրդային Հայաստանում կառուցվող կիրազոտի գործարանը, վորի արտադրողականությունն սկզբնական շրջանում լինելու թե 10,000 տոնն, իսկ Քանաքեռի հիդրոելեկտրակայանի կառուցմն ավարտելուց հետո համելու յե 20,000 տոննի. և խոստանում ե շատ մոռ ապագայում համել 40,000 տոննի։ Այս քանակությունն առաջիմ կը ավարարի Խորհրդային Հայաստանի սոցիալիստական հիմունքներով վերակառուցվող և անստիրնթաց թափով գորգացող գլուղատնտեսության ազոտային պարագանյութերի մինիմալ պահանջը։

### 1. ԿԻՐԱԶՈՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերն արդեն ասացինք, վոր կիրազոտն ստացվում ե կալզիում կարբիտի և ազատ ազոտի միացումից, ուրեմն և կիրազոտի արտադրությունը տեղի յե ունենում յերկու առանձին փուլերով 1) կրից և քարածուխից (կամ կոքսից) կալցիում կարբիտ ստանալով և 2) ստացված կարբիտն ազոտի հետ միացնելով։

Սրանցից առաջինի ստացման պրոցեսը կատարված ե երեկորական հատուկ վառարանների մեջ, ուր տեղափորվում ե կրի և քարածուխի խարնուրդը և վորի միջով անց ե կացվում ելեկ-

տրական հոսանք: Այդ հոսանքի ջերմությունը համար է 2000—22000°-ի, վորի տակ կիրճու ածուխը միանում է տալիս են կալցիում կարբիտ՝ ըստ հետևյալ ֆորմուլայի:




Այդ պրոցեսի ժամանակ կապվում է նաև մեծ քանակությամբ ելեկտրական եներգիա (քիմիական այս պրոցեսները կոչվում են ենդոտերմ):



Ստացված կարբիտն այնուհետև մանրացնում և լցնում են այլ՝ հատկապես զրա համար պատրաստած վառարններ և ելեկտրական հոսանքի միջոցով տաքացնում են այդ վառարանների միայն մի փոքրիկ մասը՝ մոտ 1000°: Այդ ժամանակ վառարանի մեջ մտցնում են մաքուր աղոտի հոսանք: Այս նպատակի համար պահանջվող աղոտը վերցնում են ողից մեծ մասամբ ողը սառեցնելու միջոցով: Կարբիտից կիրազոտ ստանալու համար նրան փորոշ քանակությամբ ավելացնում են նաև կալցիում ֆլուորիդ կամ կալցիում քլորիդ:

Ցերք այդ խառնուրդի տեմպերատուրան համար է 1100—1150° և մոցվում է աղոտը, այն ժամանակ արդեն սկսվում է աղոտի և կարցիում կարբիտի միացումը: Քիմիական տրամադրությունը հետևյալ ֆորմուլայի:

ոեակցիալի հետեանքով առաջանում է մեծ քանակությամբ տաքություն (այս պրոցեսները կոչվում են եկզոտերմ): Առաջացած այս տաքությունն արդեն տաքացնում է վառարանի՝ արհետական կերպով չտաքացրած մասը, և այդ ժամանակ ել դադարեցնում են ելեկտրական հոսանքը, այնուհետև այդ կատարվում է ինքն իրեն ի հաշիվ աղոտի և կարբիտի միացման հետեանքով առաջացած տաքության: Աղոտի և կարբիտի միացումը տեղի լե ունենում ըստ հետեւյալ ֆորմուլայի:



Այս ձևով ստացված պրոտակտն իրենից ներկայացնում է մի սկ գորշագույն մարմին և ունի հետեւյալ կազմությունը:



Բացի դրանից, նա սովորաբար պարունակում է նաև վորոշ քանակությամբ կալցիում կարբիտ, վորը սական քայլացնելով այնքան ջուր, վորը բավականացնի նրա մեջ գտնվող կարբիտի քայլալման համար:

Ստացված արդ պրոդուկտը հատուկ աղօրիք-ներով. մանրացնում են և ստացվում ե շատ նուրբ փոշի, և գործազույն: Այս նյութը շատ թեթև և և հեշտությամբ փոշիանում ու բարձրանում ե ողը: Դրա առաջն առնելու և փոխացումը վորոշ չափով սեղմելու համար նրան ավելացնում են նաև քիչ քանակությամբ վորեե եժանակին ձեթ, վորը նրան վորոշ չափով դարձնում ե կպչուն և հեշտ փոշիանալուն խանդարում:

Հ ԿԻՐԱԶՈՏԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կիրազոտը, ինչպես ասացինք, սև գորշագույն  
փոշի լե, վորոշ բացասական հատկութ, ուններով,  
ուստի նրա գործածության ժամանակ պետք է  
կիրառել մի շարք նախազդուշական միջոցներ:  
Ամենից առաջ պետք է ասենք, վոր կիրազոտը,  
վերպես ալգալիսին, բուկսերի համար վոչ միան  
վորպես սնունդ չի ծառալում, այլև վորոշ դեպ-  
քերում նույնիսկ թունավոր ազդեցություն է  
անսում մանավանդ նրանց մատղաշ ծիլերի և տե-  
րևների վրա, սրանց հետ անմիջական շփման ժա-  
մանակ: Այս լերեսութը, մասսանք բացատրվում է  
կիրազոտից անջատվող կրի ակտիվությամբ, մա-  
սամբ ել կիրազոտի քալքալման ժամանակ առա-  
ջացող պրոտակտների թունավոր հատկություն-  
ներով: Ինչպես հետո կտեսնենք, կիրազոտի ար-

հատկությունը մեծ նշանակություն և ստացել  
մոլախոտերի և վեասատուների դեմ պարքարի  
գործում:

59638-66

Մի ժամանակ կիրազոտի մասին այն կարծիքն էր տիրում, վոր նա կենդանիների և մասնավանդ մարդկանց համար ուժեղ թույն է, ուստի նրա գործածության ժամանակ պետք ե խիստ զգուշ լինել: Այս կարծիքն այժմ նույնպես կրկնվում է վորոշ տենդենց ունեցող գրականության մեջ: Պետք ե ասենք, վոր իբրոք կիրազոտը լիբրեմն ազգությ է մարդկանց վրա առաջացնելով արյան լեռակների լայնացում և մաշկի կարմրություն, արյան ուժեղ հոսանք դեպի ուղեղը, գիտապատույտ, սրածի ուժեղ և արագ բարախում, ողի պակասության զգացում, շնչառության և զարկերակի արագություն և ալին: Սակայն այս բոլորն առաջ են գալիս այն ժամանակ, լիբրե կիրազոտի հետ գործ ունեցող մարդիկ արդ աշխատանքն սկսելուց անմիջա վես առաջ կամ հետո վոգելից խմբչքներ են ընդունում, ուրիշ գեպերում այդ լեռնու լիները տեղի չեն ունենում: Հետեապես կիրազոտի գործածության ժամանակ վոչ մի կաթիլ վոգելից խիչքներ ընդունել չի կարելի:

Կիրազոտն ազդում ե նաև մարդկանց լոր-  
ձաթաղանթի վրա, և լերը կիրազոտն ընկնում  
ե մարդկանց կույրերը, վերը կամ աչքերը, նա այդ



որդանների լորձաթաղանթների բորբոքում և  
առաջացնում, ուստի ցինամիդի տարածության  
ժամանակ պետք ե զգուշ լինել (ավելի լավ ե  
քթածակերը բամբակով ծածկել և ակնոցներ  
դնել): Մանավանդնա թունավոր ազդեցություն  
ե անում, իերը ընկնում ե արյան մեջ: Դրա հա-  
մար նախ մարմի վրա բաց վերքեր ունեցող  
մարդիկ չպետք ե կիրազոտի հետ գործ ունենան,  
կիրազոտով հողերը պարարտացնելիս չպետք ե  
աշխատել մերկ մարմնով, այլ պետք ե անպատ-  
ճառ հագնված լինել. լավ ե մարմի բաց մասերը-  
ձեռքեր, իերեսը, վիզն այդ աշխատանքն սկսելուց  
առաջ թեթև լուղել, վորպեսզի հատկապես կիրազո-  
տի մեջ լեզած կիրը մաշկի ծակոտիների մեջ չմտնի  
և այրումներ չառաջացնի: Բայց այդ լուղոտած  
մասերը հեշտությամբ տաք ջրով և սապօնով  
լվացվում են, մինչդեռ չլուղոտելու դեպքում,  
վորքան ել մարդք լավ լվացվի, դարձյալ ձեռքե-  
րի, իերեսի և զգի վրայից կիրազոտը միանգամից  
բոլորովին չի մաքրվում:

Ինչ վերաբերում ե կիրազոտի կենդանինե-  
րի համար վնասակար լինելուն, պետք ե ասենք,  
վոր այստեղ ևս գոյություն ունեն մի շարք նա-  
խապաշարումներ, վորոնք միանգաման վերանում  
են մանրամասն հետազոտությունից հետո: Այժմ  
արդեն պարզված ե, վոր կիրազոտը կենդանինե-

րին սպանում ե շատ մեծ դոզաներով տալու  
ժամանակ միայն: Իսկ ալդպիսի դոզայով կիրա-  
զոտ կենդանիները լերբեք կամովին չեն ընդու-  
նում:

Ալվես, Koelsch և Stritt-ը ապացուցել են,  
վոր որինակ՝ կիրազոտի ճագարների համար մա-  
հացու դոզան լուրազանչյուր կիլոգրամմ կենդա-  
նի քաշն 1,4 գրամն ե, իսկ շների համար 0,2  
գրամմը և այն ել այն դեպքում, իեթե ալդքան  
կիրազոտ միանգամից մտցնում ենք կենդանինե-  
րի ստամոքսը: Այդ փորձերից նրանք լեզրակաց-  
նում են, վոր կիրազոտը վոչ մարդկանց և վոչ  
ել կենդանիների համար վտանգավոր չե, վարով-  
հետեւ մահացու դոզան այնքան մեծ ե, վոր նրանք  
անզգուշությամբ այդքան մեծ դոզա ընդունել  
չեն կարող, իսկ չարաժտությամբ ել տալ նույն-  
պես անկարելի յե:

Ինչ վերաբերում ե վոչխարներին և տավա-  
րին, ապա պետք ե ասենք, վոր թեև դրանց հա-  
մար մահացու դոզան հայտնի չե, բայց ինչպես  
ցույց են տվել այդ ուղղությամբ կատարված  
բազմաթիվ փորձերը, այդ կենդանիները կիր-  
ազոտով կեղտոտված կերերը բոլորովին չեն ու-  
տում: Մարդկետինները և արոտատեղերը պա-  
րարտացնելու ժամանակ, այստեղ արածող կեն-  
դանիները կիրազոտվ ծածկված խոտերը բոլորո-

վին չեն ուտում։ Ալդ փորձերը կատարողներից մեկը, Hundshammer, ասում ե՝ «Եթե կենդանիները կիրազոտով կեղտոտած կեր են ստանում, նրանք սատկում են վոչ թե կիրազոտից, այլ քաղցից»։

Այսպես, ուրեմն, բազմաթիվ փորձերով ապացուցված ե վերջնականապես, վոր կիրազոտ վոչ միայն մարդկանց, այլ նաև ընտանի կենդանիների համար վոչ մի վտանգ չի ներկայացնում և այն տարածված կարծիքը, թե կիրազոտն ուժեղ թույն ե մարդկանց և կենդանիների համար, հետևանք ե վոչ թե ռեալ գիտական տվյալների, այլ տգիտության կամ սոսկ չարամտության։


### Յ. ԿԻՐԱԶՈՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես ասպցինք, կիրազոտը բույսերի համար անմիջական անունդ չի ծառայում և վորուեսզի կիրազոտն իր ալդ գերը կատարի, նա հոգում պետք ե յենթարկի վորոշ փոփոխությունների, գերածվի քիմիական ախտիսի միությունների, վորոնց բույսերը մնվում են։ Ցեվ վորով հետեւ կիրազոտով հողը պարարտացնելու դեպքում հողի բերքատվությունը մեծանում է, ուստի նա հողում իրոք յենթարկվում ե վորոշ փոփոխությունների, վորի արագությունը հետևապես և կիրազոտի՝ բերքի բարձրացման վրա ունեցած

ազդեցության արագությունը, մեծ չափերով կախված ե հողի քիմիական, ֆիզիկական և բիոգիական հատկություններից։



Սկզբում զիանականները յենթագրում ելին, վոր կիրազոտի հողում կրած փոփոխությունները կախված են բացառապես հողի մեջ գտնվող բակտերիաներից, այսինքն՝ հողի բիոլոգիական հատկություններից։ Հետագայում, մանավանդ գերմանացի ագրո-քիմիկոս Կապենի լերկարամյա մանրազնին ուսումնասիրությունները ցույց տվին, վոր կիրազոտի փոփոխությունների սկզբանական փուլերը կախված են զլանափորապես հողի ֆիզիկական և քիմիական հատկություններից և միայն վերջին փուլերն են, վոր տեղի յեն ունենալով բակտերիաների ազդեցության տակ։

Ամենից առաջ կիրազոտը՝ հողը մացնելուց հետո, ջրի հետ միանալով քայլայվում ե ու տալիս ցիանամիս և կիր։ Ցիանամիտն ել իր հերթին միանալով ջրի հետ՝ տալիս ե միզանլութը հետևյալ փորմուլաների։




միզանյութ առաջանալը տեղի է ունենում հողի  
կոլորիդների, մանր մասնիկների միջոցով։ Հատ-  
կապես մանր կավալին մասնիկների և հողի որ-  
դանական նյութերի (հումուսի) ազդեցության  
տակ են կատարվում այս ոետակցիաները, ուստի  
վորքան հողը կավալին եւ և որդանական նյու-  
թեր շատ եւ պարունակում լուր մեջ, ալսինքն՝  
վորքան նա կոլորիդներով հարուստ եւ, այնքան  
ել այս ոետակցիաներն արագ են տեղի ունենում։  
Աւրեմն ծանր կավալին և հումուսալին հողերում  
կիրազոտն ավելի արագ եւ փոփոխության յեն-  
թարկվում, իսկ թեթև ավազալին հողերում ընդ-  
հակառակն, ավելի դանդաղ։

Այսպիսով, ստացվող միզանյութը հետա-  
գալում հողի բակտերիաների միջոցով քարքարվում  
և տալիս եւ ամմոնիակ կամ ամմոնիում կարբո-  
նատ, իսկ վերջինս ել իրեն հերթին դարձալ  
բակտերիաների միջոցով վեր եւ ածվում ազո-  
տալին թթվի այսպես։



ջուր։



Ազոտական թթուն ել իր հերթին հողի մեջ  
յեղած հիմքերի հետ չեղոքանում եւ սալիս ե  
ազոտական թթվի աղ կամ սալպետեր (սելիտրա),  
վորն արգեն բուլսերի համար ծառալում ե  
վորպես մնունդ։

Այս բոլոր փոփոխությունների արագու  
թյունը, ինչպես ասացինք, կախված են հողի  
հատկություններից. վորքան հողերն ոժաված են  
ավելի լավ հատկություններով, այնքան փոփո-  
խություններն արագ են կատարվում, և վորքան  
վատ են, այնքան դանդաղ են կատարվում։

Վորպեսզի կիրազում հողում իր ժամանա-  
կին քարքարվի և բուլսերին վորպես մնունդ  
ծառալի, պետք եւ վատ, ավազոտ հողերը կիր-  
ազոտով պարարտացնել ցանքսից 2-3 շաբաթ  
աւագ։ Կավալին և հումուսալին հողերը կարելի  
յեւ պարարտացնել ցանքսի 1-2 որ առաջ, իեր  
ըեմն նույնիսկ ցանքսի որը, թեև դա վորոշ չա-  
փով, ինչպես հետո կտեսնենք, կախված ենան  
ցանկելիք բուլսերից։

#### 4. ԿԻՐԱԶՈՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կիրազոտի արտադրության հենց սկզբից սկսեցին գլուղատնտեսության մեջ այն գործադրել առանց վորև և վերամշակության՝ վորպես պարարտանըութիւն, թեև սկզբնական շըջանում գլուղատնտեսները և գիտնականները կարծում ենին, թե անհրաժեշտ կլինի այն գործարանալին վերամշակության լենթարկել և դարձնել ազոտի այնպիսի միություններ, վորոնք բուլսերի համար հանդիսանան վորպես անմիջական սնունդ (ամմոնիումի կամ ազոտական թթվի աղեր): Բայց պարարտացման փորձերը ցուց տվին, վոր կիրազոտը վորպես արդպիսին, առանց վերամշակության նույնպես շատ լավ ազդեցություն եւ ունենում բերքի բարձրացման վրա, ուստի և մինչև ալսոր ել ալս, առանց վորեւ վերամշակության, լայն չափերով գործ եւ ածվում հողերի պարարտացման համար:

Սակայն կիրազոտի գործածության դեպքում նրա ազդեցությունը չի սահմանափակվում միայն բուլսերի համար վորպես սնունդ ծառալելով, այլ նա հողի վրա անում եւ մի շարք այնպիսի ազդեցություններ, վորոնք նրա արժեքը, վորպես պարարտանըութիւն, ավելի լեն բարձրացնում:

Նախ պետք եւ պահեք, վոր մի շարք պրակտիկ գլուղատնտեսներ վաղուց նկատել են, վոր կիրազոտը վոչ միայն ազդում եւ հողի քիմիական հատկությունների վրա, այլ նաև յավացնում եւ նրա ֆիզիկական հատկությունները, ալինքն՝ կիրազոտով հողերը պարարտացնելու դեպքում մնաք բերքի հավելում ստանում ենք վոչ միայն այն պատճառով, վոր հողը հարստացնում ենք ամենակարևոր սննդառու ելեմենտով՝ ազոտով, այլ նաև այն պատճառով, վոր այդ պարարտանյութն ազդում եւ հողի ֆիզիկական հատկությունների վրա, հատկապես նրա կազմության սարուկառայի վրա: Այսպես, որինակի, հայտնի գերմանացի գլուղատնտես Լոխովը պնդում է, վոր ծանր կավաճողերը կիրազոտով պարարտացնելու դեպքում հաղի վերին շերտը խիստ փըսրանում ե, վոր պիուի լերկույթը նա բացարում ե հողի միկրոօրդանիզմների բազմանալու հավանականությամբ:

Այս լերենութիւնի պատճառները պարզելու համար 1923 թվին մի շարք փորձեր են գրել, վարոշելու համար կիրազոտով պարարտացրած հողերի միկրոօրդանիզմների քանակը և հանգեցնեալ հետեւյալ լեզրակացության. կիրազոտը հողերի բակարիաների թիվը ավելացնում եւ վոչ թե ազատ ցիանամիդի կամ կրի ազդեցությամբ, վո-

ըիոնետև ալդ նյութերը միասին կամ առանձին-  
առանձին հողը մտցնելով, նրանք բակտերիաների  
քանակի բազմացումը չեն նկատել: Այդ լերե-  
ութը նկառվել ե գործարանալին պրոդուկտի  
մեջ գանգող կալցիում ցիանամիղի ե կրի փոխ-  
ազդեցությամբ: Այդ փորձերը ցուց են տվել  
նաև, վոր բակտերիաների քանակի բազմանալը  
սերտ կերպով կախված ե հողի ռեակցիայից և  
վոր բակտերիաների թիվը չեզոք ու հիմքալին  
հողերում ավելի շատ ե մեծանում, քան թթու-  
հողերում:

Ավելի հետաքրքրական են այդ ուղղու-  
թյամբ կատարած A. և G. Novff.-ի փորձերը, վո-  
րոնք ալդ հարցն ուսումնասիրել են լաբորատո-  
րական պարմաններում: Հողերի մեջ մտցնելով  
վորոշ քանակությամբ կիրազոտ, ամմոնաու-  
ֆատ և նատրիումիտրատ, վորոշել են ալդ հո-  
ղերի բակտերիաների քանակը 24 ժամից և 4,  
6 ու 12 շաբաթից հետո: Փորձերը ցուց են  
տվել, վոր կիրազոտով պարաբացրած հողերի  
բակտերիաների քանակը 24 ժամից հետո խիստ  
պակասել ե, մինչդեռ կոնտրոլ անօթների և ամ-  
մոնուլֆատով ու նատրիում նիտրոտով պա-  
րաբացրած հողերի բակտերիաների քանակը  
հաւարյա վոչ մի փոփոխության չի լինթարկվել:  
Չորս շաբաթից հետո ստացվում ե բոլորովին այլ

պատկեր, այս դեպքում կիրագոտ ստացած է: Դերի բակտերիաների քանակը, սկզբնականի հետ  
համեմատած, ավելացել է 100 և ավելի տոկո  
սով, իսկ մյուս անօթների հողերի բակտերիա-  
ների թիվը այս անգամ նույնպես լինթարկված  
չի լինել վոչ մի փոփոխության: Հետաքրքրական  
այն ե, վոր բակտերիաների այս մեծ թիվը չա-  
րունակու՞ և մնալ մինչև 12 շաբաթ և ել ավելի:  
Հեղինակներն այս փորձից հետևեցնում են, վոր  
կիրազոտը հողերի վրա ազդում ե վոչ միայն  
իրքեւ պարաբատանլութ: այլև նա հանդիսանում ե  
վորպես հողի «մասնակի ստերելիզացիայի» այս-  
պես կոչված՝ հողերը մաքրելու կամ առող-  
ջացնելու միջոց: Իսկ հողի մասնակի ստերելի-  
զացիայի, նրա մաքրելու նշանակությունը խիստ  
մեծ ենքարերքատվությունը վերականգնելու հա-  
մար: Այս դեպքում կոտորվում են վնասակար  
բակտերիաների, հատկապես սպորավոր բակտե-  
րիաների մեծ մասը և համարլա բոլոր նախա-  
կենդանիները, իսկ ոգտակար բակտերիաների  
մեծ մասը հատկապես ազուղ կապող բակտերի  
աները գիմանում են հողի ալդ մասնակի ստե-  
րելիզացիայն: Այնուհետև, լիբր կիրազուը քիմի-  
ական փոփոխությունների և միզանյութի վե-  
րածվելու հետևանքով կորցնում ե իր թունավոր  
(այդ միկրոսրդանիզմերի համար) հատկությու-

նը, կենդանի մացած բակտերիաներն ակում են արագությամբ բազմանալ, վորպես մնունդ ոգտագործելով մեռածների դիակները։ Դրա հետեւակնքը լինում է այս, վոր մասսակար բակտերիաների կոտորվելու հետևանքով ոգտակար բակտերիաներն ել ավելի լին բազմանում և հողի մեջ առաջ են բերում մի շարք դեռևս մանրամասն չուսումնասիրված ոգտակար փոփոխություններ և արդարացնով, ազդում հողի բերքատըլության վրա։ Այսպիսով, կիրազոտն իր մեջ միացնում է հողի բերքատըլության համար յերկու կարևոր հատկություններ՝ վորպես կանաչ ըռույսերի ազոտի մնանդի աղբյուր և վորպես հողերը «մաքրելու» միջոց։

Գալով կիրազոտի հողերի բերքատըլության վրա ունեցած ազդեցությանը, պետք է ասենք, վոր այս ուղղությամբ հատկապես կատարված են բազմաթիվ փորձեր, վորոնք մանրամասնորեն պարզել են կիրազոտի գործածության համար նշանակություն ունեցող բոլոր կարեռը մոմենտները, և այժմ արդեն այդ պարարտանյութի գործածության ձևերը տարբեր բուլսերի և տարբեր հողերի համար, ընդհանուր առմամբ, կարելի լի պարզված համարել։

Նախ հողերի մասին։ Կիրազոտի մասին լեղած հին գրականության մեջ այն միտքն է

հալանվում, թե կիրազոտն ամենից լավ եֆեկտ է տալիս կրով հարուստ կավախառն և չեզոք հողերում, իսկ թթու և ավազալին հողերում նըապղեցությունը թուլ է, յերբեմն՝ նույնիսկ մնասակալը։

Այս կարծիքը, վոր առանց քննադատության արտագրվում է զբաղից գիրք, հիմնված է մասամբ տեսական սխալ լենթագրությունների, մասամբ ել անհաջող և սխալ կատարած փորձերի վրա։ Բանն այն է, վոր իրոք, այդ վերջին տիպի հողերում կիրազոտի քակքալումը ոի քիչ ավելի զանգաղեկատարվում, քան առաջին տիպի կոլորդներով և բակտերիաներով հարուստ հողերում։ Սակայն այդ դեռ չի նշանակում, թե թթու և ավազալին հողերում կիրազոտը բերքի հագելում չի տալիս, ինթե այդ պարարտանյութը ժամանակին ենք մտցնում հողերի մեջ։ Ընդհակառակը, վերջին տարիներն ավելի մեծ խնամքով կատարած փորձերը ցուց են ավել, վոր կիրազոտը թթու հողերում շատ ավելի լավ ազդեցություն է անում, քան վորեւ և այլ ազտային պարարտանյութ։

Այժմ արդեն պարզված է, վոր ավազալին և թթու հողեր կիրազոտով պետք է պարարտացնել ցանքսից լերկու—լերեք շաբաթ առաջ, իսկ կավալին չեզոք հողերը կարելի լի պարարտացնել

նույնիսկ ցանքսի որը, պայմանով, վոր կիրառութեան մտցնելու ժամանակ այն չոր չինի, վորով հետեւ խոնավության բացակայության դեպքում կիրազոտի քայլալումը դանդաղ է ընթանում, իսկ դա շատ անգամ, հատկապես բամբակի պարարտացման ժամանակ անդրադառնում ե բերքի բարձրացման չափի վրա:

Ուրեմն, կիրազոտով հողերը պարարտացը նելու ժամանակ պետք ե՝ կամ պարարտացումը կատարել ցանքսից 2—3 շաբաթ առաջ, կամ ուշ կատարելու դեպքում պետք ե հոգ տանել, վոր հողերը խոնավ լինեն:

Վերն արդեն մենք տեսանք, վոր բուլսերը կիրազոտն անմիջապես չեն լուրացնում, այլ այն հողի մեջ վորոշ փոփոխությունների լենթարկվելուց հետո լեն միայն բուլսերի կողմից լուրաց վում: Այդ փոփոխություններն ել տարբեր հաղերում—տարբեր արագությամբ են կատարվում, իսկ շատ բուլսեր ել իրենց զարգացման շրջանում են մեծ քանակությամբ ազուտական թթվի աղեր պահանջում, ինչպես, որինակ, ճակնդեղը, մասամբ նաև բամբակը: Հետևապես ալդուխի բուլսերի հատկացված հողերի պարարտացումը պետք ե կատարել ցանքսից շատ առաջ, վորպեսզի կիրազոտը քայլալի և վերածվի ազուտական թթվի աղերի (նիտրադների):

Նման դեպքերում հողերը կիրազոտով պետք ե պարարտացնել աշնանից, վարից առաջ, ապա վարել գութանով և պարարտանլութը մտցնել հողի մեջ: Աշնանը հողը մտցրած կիրազոտի քայլալումը տեղի լե ունենում աշնանը և վողջ գարնանը, և ճակնդեղ կայ բամբակ ցանելու ժամանակ հողերում բավական քանակությամբ ազուտական թթվի աղեր են կուտակված լինում, վորով և ոգտվում են այդ բուլսերը:

Մյուս գարունացան բուլսերին հատկացվող հողերն ավելի լավ ե պարարտացնել գարնանը: Իսկ աշնան հացահատիկների հողերը պետք ե պարարտացնել աշնանից, ամբողջ պարարտանլութը մտցնելով մի անգամից, յեթե այդ գաշտերում գարնանը մոլախոտերի գեմ կովելու համար կիրազոտի գործածության կարիքը չկա:

Վարելահողերը կիրազոտով զարգացնելիս պարարտանլութը պետք ե շաղ տալ հողի լերեսից՝ ձեռքով կամ մեղքնայով, ապա հողերը լավ փոցինել և պարարտանլութը հավասար կերպով խառնել հողի հետ: Ձեռքով շաղ տալու դեպքում պարարտանլութն անպայման պետք ե խառնել խոնավ հողի հետ և ապա ցըել: Սա այն նշանակությունն ունի, վոր հողի հետ խառնված կիրազոտն այնքան ել չի փոշիանում, նրա շաղ տալն ավելի հեշտ ե և կարելի լե հավասար կերպով ցըել հողի լերեսը:

Յեթե հողերը միաժամանակ պարաբռաց-  
վում են նաև սուլպերֆոսֆատով, այն ժամանակ  
այդ պարաբռանլութերը հողը պետք ե մտցնել  
առանձին-առանձին, վրովինետև դրանց խառնելու  
դեպքում, սուլպերֆոսֆատը միանում ե կիրա-  
զոտի մեջ յեղած կրի հետ և նորից տալիս չուժ-  
վող ֆոսֆորաթթվի աղեր։

Կիրազոտը շատ լավ պարաբռանլութ ե հան-  
դիսանում նաև մարգագետինների և խոտհարք-  
ների համար, վորովինետև նաև, ինչպես հետո  
կտեսնենք, վոչչացնում ե մոլախոտերը, լերկ-  
ըորդ՝ նրա մեջ պարունակվող կիրը և աղոտն  
ուժեղ կերպով նպաստում են թե հասկավոր և  
թե թիթեռնածաղիկ խոտերի զարգացմանը։ Այս-  
պես, պրոֆ. Գիգեվիուսի փորձերը ցույց են  
տվել, վոր կիրազոտով պարաբռացրած մարգա-  
գետինների խոտերը հետևյալ փոփոխության են  
լենթարկվում։

### Բուլիսերի տեսակները՝

չպարաբռացրած KR KP + կիրազոտ

Nardus	80 %	30 %	—
հյութաբուլիսեր	10 %	20 %	20 %
հասկավոր			
խոտերի	10 %	30 %	10 %
լերեքնուկ		20 %	20 %

Մարգագետինները և արոտատեղերը պետք

ե կիրազոտով պարաբռացնել կամ ուշ աշնամնը, կամ  
վաղ գարնանը, ձյունը հալչելուց հետո։ Այս դեպ-  
քում պարաբռանլութը պետք ե ուղղակի շաղ  
տալ հողի լերեսը և արսակ թողնել։ Անձրեա-  
տալ հողի լերեսը և արսակ թողնել։ Անձրեա-  
տալ հողի լերեսը և արսակ թողնել։ Իսկ  
ջրեցն այն կլուծեն և կմտցնեն հողի մեջ։ Իսկ  
լեթե պարաբռացումից հետո այդ հողերը փոց-  
իւթե պարաբռացումից հետո այդ հողերը փոց-  
իւթե պարաբռանլութի աղկեցության համար ան-  
դա պարաբռանլութի աղկեցության համար ան-  
հրաժեշտ չե։

Բայց ի պարաբռացման նպատակներից կիր-  
ազոտն այժմ լայն չափերով գործ ե ածվում  
նաև մոլախոտերի, հատկապես լայնատերև մո-  
ւանական մոլախոտերի, համար։ Կիրազոտը լավ  
ե ազդում մասնավորապես բոխկուկի, վալրի  
մասնակի և գլխի դեմ։ Մոլախոտերի գեմ կովե-  
լու համար սովորաբար գործ ե ածվում չլուղած  
կիրազոտը, վորը հեշտությամբ փոշիանում ե և  
ընկնելով մոլախոտերի տերևների, մանավանդ  
բաց տերևների վրա, նրանց այրում, վոչչացման  
ե։ Դրա համար կիրազոտը պետք ե շաղ տալ  
աշնան հացահատիկների մոլախոտերով հարուստ  
դաշտերի վրա այն ժամանակ, լերը մոլախոտերը  
4—6 տերե ունեն։ Այս դեպքում չյուղած կիր-  
ազոտն ընկնելով մոլախոտերի լայն և նորի  
զոնական տերևների վրա, կաչում ե տերևներին  
և ալրում, սպանում ե, իսկ հացահատիկների նեղ

և ուղղահայաց տերևների վրա քիչ եւ ընկնում, ընկածն ել չի մնավում, վորովհետեւ հացահատիկների ի տերեւ ներն ավելի դիմացկուն են կիրազոտի թունավոր ազդեցության հանդեպ՝ շնորհիվ իրենց տերևների կուտիկուլայի մոմանյութերի մեծ քանակության։ Նույն ձեռվ ել պետք ե կիրազոտը շաղ տալ նաև մարգագետինների և արոտատեղինների մոլախոտերի դեմ կովելու դեպքում։

Թե վորքան մեծ նշանակություն ե ստացել կիրազոտի միջոցով մոլախոտերի դեմ կովելը, երևում ե այդ նպատակով Գերմանիայում գործադրվող կիրազոտի քանակից

Գերմանիայում մոլախոտերի դեմ կովելու նպատակով գործածվող կիրազոտի քանակն ըստ տարինների՝

1926	թվի բերքի համար	20 000	տոնն
1927	»	34.000	»
1928	»	43.000	»
1929	»	52.000	»

Պակաս քնառ չեն հասցնում գյուղատնտեսությանը նաև բուսների հիվանդություններն ու վնասատուները, վորոնց դեմ կիրազոտով պալքարելու փորձը նույնպես, վորոշ դեպքերում, դրական հետևանքներ են տվել։ Սակայն կիրազոտի գործածության ուր ձևի դրական հետևանքը.

ները դեռ ևս մանրամասն ուսումնասիրված չեն և յեղած տվյալներն ել հաճախ միմյանց հակառակ են։

Կիրազոտը մեծ հաջողությամբ գործ ե ածվում հատկապես դաշտավին խխունջների դեմ, վորոնք կիրազոտով պարարտացրած հողերում հարցուք տոկոսով վոչնչանում են. Այս հանգամանքը շատ կարևոր է հատկապես Անգրկովկասի համար այն աեսակետից, վոր մեզանում խխուտարածված վոչխարների քրավանակ (Rasciologyos) հիվանդություն տարս ծողները նույնպես դաշտավին խխունջներ են (Zimnaens minus)։ Դրանք ապրում են մարգագետինների խոտերի վրա և վոչխարներին վարակում են այդ պարագիտ վորգերի թրթուներով. Այդ հիվանդության դեմ պալքարելու արժատական միջոցը՝ խխունջները վոչնչացն են եւ. Այս դեպքում այդ աշխատանքը, Խարգագետինները և արոտատեղինների պարարտացման հետ միացնելը՝ ավելի ողտավետ ե դառնում։

Հայտնի լի, վոր Զիմուլա ներն իրենց պատահաններից դուրս են վալիս միայն գիշերները և մինչև արեի ծագելը մնավում են և շարժվում են խոտերի վրա, իսկ ցերեկը նորից մանում են պատրանը և մինչև լեռեկո մնում են անշարժ։ Հետեւապես դրանց դեմ հաջողությամբ կուելու

անհրաժեշտ ե կիրազութը շաղ տալ գիշերները  
կամ վաղ առավոտյան, մինչեւ արեի ծագելը։  
Խխունջների պատրանը մտնելուց հետո, կիրազու-  
թը շաղ տալ նրանց վրա վոչ մի ազդեցություն  
չի անում, իսկ քանի դեռ խոտերի վրա կիրազու-  
կա, նրանք իրենց պատրանից դուրս չեն գալիս

Այս նպատակով կիրազութի գործադրելը  
նույնպես լայն չափեր ե ընդգրկում։ Մեզանում  
նույնպես դա հսկայական հեռանկարներ ունի.  
Իթե նկատի ունենանք վոչխարի քառ փանակ  
հի լանդութքան մեզանում հսկայական ծագալ  
ստանալը և այն խոշոր մնաները, վոր այդ հի-  
վանդությունը հասցնում է մեր վոչխարաբուծու-  
թիանը։ Յեթե նկատի ունենանք նաև մեր մար-  
դագետինների և արոտատեղերի բերքի խիստ  
փորբությունը և պարարտացման միջոցով այն  
ավելացնելու անհրաժեշտությունը և այդ ծախսն  
ու աշխատանքը քառանկակի դեմ կովելու հետ  
կապելը, կուենանք, թե ինչպիսի հեռանկարներ  
են բացվում մեր իերկում՝ կիրազութի գործա-  
ծության համար։

## 6. ԿԻՐԱԶՈՏԻ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ Խ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հարաքիլսարցամ կիրազութի գործարանի կա-  
ռուցման առընչությամբ մեր առաջ ինդիք ե

գրվել՝ մանրամասնորեն ուսումնասիրել կիրազո-  
տի ազդեցությունը Խ. Հայաստանի տարբեր կի-  
մայական և հողալին պարմաններ ունեցող շըր-  
ջաններում և այդ շըրջաններում մշակվող գլխա-  
վոր կուլտուրաների վրա, այն ե՛ բամբակ, ճա-  
կանդեղ, կարտոֆիլ, հացահատիկներ և բանջա-  
րեղեններ

Այդ փորձերին ձեռնարկվել ե 1828 թ., սա-  
կան վորպես ազոտի աղբաւուր՝ այդ թվին գործ ե  
ած գել գլխավորապես ամմոնուլֆոս, իսկ կիրազո-  
տի լայն ծավալով փորձերը կատարվել են 1929  
թվից և այնուհետև փորձերի թիվը տարեց տա-  
րի ավելանալով ընդգրկում են նոր շըրջաններ։  
Այդ աշխատանքին զուգընթաց կատարվում են  
ուսումնասիրություններ՝ փորչելու մեր հողերի  
պարարտանութերի կարիքը, ինչպես նաև պա-  
րարտանլութերի տարբեր դոզաները և տարբեր  
ազոտալին պարարտանլութերի համեմատական  
ազդեցությունը՝ մեր հողալին կլիմաքական պայ-  
մաններում։

Մինչեւ այժմ Խ. Հայաստանում կատարած  
բոլոր փորձերը ցուց են ավել, վոր մեր բոլոր  
հողերը, առանց բացառության, առաջին հերթին  
ազոտի և յերկրորդ հերթին՝ Փոսֆորի կարիք  
ունեն։ Հատկապես մեր դաշտալին շըրջանների  
ազոտի կարիքը շատ մեծ է, իսկ Փոսֆորալինը՝

Քիչ սակայն բերքի ամենամեծ հավելումներ մենք ունենում ենք այդ յերկու պարարտանյութերի կոմբինացիալից ինչպես այդ ցուց են տալիս ստորև բերած տախտակները:

**1929 թ. ԴԱՇՏԱՑԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԵՐԻ  
ԱՐԻՑՈՒՆՔՆԵՐԸ**

**ԲՈՄԲԱԿ**

Ծրջաններ	Բերքը հեկտարից ցենտներով			Բերքի հավելումը %-%ով			
	O	N	P	N	P	NP	
Համարու	10,2	10,5	9,8	12,0	3	4	18
Հուրդուղուլի	8,7	10,8	10,0	12,0	24	15	38
Զանգիբասար	15,6	20,5	17,7	20,6	32	13	32
Հըազդան	14,1	18,3	16,3	19,4	30	16	37
Վաղարշապատ	7,6	8,8	8,7	9,9	4	15	31

**ՅՈՒՐԵՆ**

Ծրջաններ	Բերքը հեկտարից ցենտներով			Բերքի հավելումը %-%ով			
	O	N	P	NP	N	P	NP
Եջմիածին	11,8	15,9	15,3	21,6	35	32	91
Համարու	10,1	12,2	11,5	16,6	23	14	69
Հըազդան	28,0	42,3	33,3	42,7	48	19	52
Հուրդուղուլի	12,6	18,8	16,5	20,5	58	18	62

Բնդիանուր առմամբ 1930 թվի տվյաները նույնին են, ինչ 1929 թ., ինչպես նաև 1931 թվինը:

Թեև ստացված աբսոլուտ թվերը միմանցից տարբերվում են, սակայն փորձերի արդյունքի ընդհանուր պատկերը նույնին է, աւտինքն՝ բերքն առաջին հերթին ավելանում է ազտային (կիրագոտ) պարարտանլու թի ազդեցությունից, ապա ֆուֆուրային (սու պերֆուֆատ), իսկ այդ յերկուսի կոմբինացիայի գեպքում՝ բերքն ավելի լեռարձանում։ Մեր ասածներին վորպես իլլուստրացիա բերենք 1931 թվի փորձերից մի բանիսը.

**1931 թվի ՏՎՅԱԼՆԵՐԻՑ**

Բամբակ նովրզու	Բերքը հեկտարից ցենտներով			Բերքի հավելումը %-%ով			
	O	N	P	NP	N	P	NP
Բամբակ նովրզու	23,3	28,1	28,4	30,0	21	22	29
» Բեղազու	10,1	11,7	10,9	16,6	15	7	15
Աշն. ցորեն մնացք							
» ջրովի	12,6	18,4	20,8	21,8	46	65	73
» ցոր. ելլառ մնացք	10,3	16,8	19,3	20,1	63	88	91

Այս թվերը ցույն են տալիս, վոր մեր գաշտալին ըջանի հողերը, առանց բացառության, կիրագոտվ պարարտացնելու գեպքում բերքը զգալիորեն բարձրանում է, հետևապես այս պարարտանլութը հսկայական գեր ե խաղալու մեր

դաշտալիքն աելինիկական կուլտուրաների մշակության շրջաններում:

Պակաս նշանակություն չունի կիրազոտը նաև մեր լեռնալին շրջանների բերքի բարձրացման համար, ինչպես այդ յերեսում եւ լեռնալին շրջաններում դրված փորձերի արդյունքներից:

**1929 թ. Լե՛նԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԵՐԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

	ԲԵՐՔԸ ՀԵԿՄՈՒԹԻՒԾ ԵԵՆԱՏՆԵՐ.				ԲԵՐՔԻ ՀԵՎԵԼՈՒՄ 0% 0%-ԱՎ		
	O	N	P	NP	N	P	NP
Անինականի լրջ. կորուֆիլ	153,8	179,5	162,9	192,3	17	7	27
» շաք. ճակնդեղ	143,1	166,1	166,5	182,3	15	16	27
Սիանի լրջ. աշճ. ցորեն	10,4	13,1	13,0	18,5	26	25	77
գարնան ցորեն	8,6	11,7	11,2	16,5	36	30	91
գարնան դարի	8,9	12,5	11,2	15,2	30	24	70

**1931 թ. ՓՈՐՁԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ**

	ԲԵՐՔԸ ՀԵԿՄՈՒԹԻՒԾ ԵԵՆԱՏՆԵՐ.				ԲԵՐՔԻ ՀԵՎԵԼՈՒՄ 0% 0%-ԱՎ		
	O	N	P	NP	N	P	NP
Դարնան գարի Մարտունի	8,2	12,8	9,7	13,7	49	17	66
» ցորեն Դղմաշեն	5,8	10,4	6,6	9,6(?)	80	14	64
Կարտոֆիլ Մարտունի	125	174	118	162(?)	39	5	30
Կերի ճակնդեղ Ն.-Բայցետ	173	194	177	196	12	2	13
» Ռնդամալ	332	352	344	387	6	3	16
Մարդարազետին խոռա	36,6	43,6	39,3	57,1	19	7	56

Ինչպես այս թվերից լերևում ե, լեռնային շրջաններում նույնպես ավելի լավ ազգում ե ազուրը (կիրազոտ) և ապա ֆոսֆորը (սուֆեր-ֆոսֆատ): Ալստեղ նույնպես, ինչպես դաշտալին շրջանում, ավելի լավ եֆեկտ տալիս ե այդ յերկու պարարտանյութերի կոմբինացիան:

Ամենահետաքարտականը՝ աղոտախն տաքքեր պարարտանյութերի համեմատական ազգեցությունն ե, վոր ստացվում է Հայաստանի կիրմայական և հողային պայմաններում: Բանն այս ե, վար Յեվրոպայի փորձերը ցուց են տվել, վոր անտեղ կիրազոտն իր ազգեցութլամբ վորոշ չափով լեռ ե մնում մյուս պարարտանյութերից: Ալսպես, յեթե Զիլիական սելիտրալի աղցեցությունն ընդունենք 100, ամմոնալֆատին կլինի 95, իսկ կիրազոտինը 80 — 86:

Բեե պիտի ասենք, վոր այստեղ, վորոշ գեպքերում, կիրազոտն ավելի մեծ ազգեցությունն ե անում, սակայն բազմաթիվ փորձերի միջինը՝ հավասար ե վերը բերք բերք բերք բերքին:

Ինչ վերաբերում ե Հայաստանի պայմաններում տարբեր աղոտալին պարարտանյութերի ազգեցությանը՝ մենք ստանում ենք բոլորպին այլ պատկեր: Ալսպես, 1929 թվի փորձերում առաջն տեղը բանում ե կիրազոտը, ապա գալիս ե ամմոնալֆատը և ամենավերջին տեղը բունում ե սալպետերը:

1931 թվին ստացվել են հետևյալ տվյալները՝

Փոքրի տեղը և կուլտուրան	Բերքը հեկտարից ցհնուներով						N5
	O	N4	Nω	Nσ	Nρ	Nππ	
Նորագոլիթ բամբակ	11,9	13,6	13,8	14,5	—	—	—
Գոյզումբեթ բամբակ	13,4	14,5	14,0	14,7	—	—	—
Աղամզալու	»	9,5	10,3	10,4	—	—	—
Նորագոլիթ	»	8,2	8,8	9,0	—	—	—
Մարտանի կարսոֆիլ	100	134	—	170	—	—	—
Յերեան տոմատ	173,6	183,3	157,6	179,6	159	1731	—
» կաղամբ	73,1	92,4	87,7	—	—	—	—
» տոմատ	111,6	153,8	116,8	—	—	—	—
Դարաբիլոս կաղամբ	219	410	433	444	—	—	—

Ինչպես լերեռում ե վերը բերքած տակտակից դաշտային — բամբակագործական շրջաններում վորոշ բույսերի բերքի բարձրացման գործում կիրազուր բռնում ե առաջնակարգ տեղ՝ ամենատու վատի հետ հավասար և շատ քիչ ե տարբերվում սալպետերից: Մինչդեռ 1929 թվին սալպետերն այս շրջաններում իր ազդեցությամբ բռնում եր վերջին տեղը: 1931 թվին նաև, Յեղուռապական փորձերի նման, նորից բռնում ե առաջին տեղը, թեև ամենաուժագույն կիրազուր նկատելի չափերով լետ էն մնում սալպետերից: Այլ պատկեր ե ներկալացնում կիրազուր

ազդեցությունը բանջարեղենների, առաջին հերթին, տոմատի վրա, ուր փորձված աղոտալին վեց պարաբունյութերից միայն միզանլութն ե գերազանցում կիրազուրին, մնացածները բոլորն ել իրենց ազդեցությամբ կիրազուրից շատ լետ են մնում:

Հեռնային շրջաններում կիրազուր կարծեսթե մոտենում ե Յեղուռապական փորձերի հետեանըներին, այսինքն՝ սալպետերից և ամմոնիուլ-ֆատից հետո բռնում ե լերըորդ տեղը:

Նման արգլունըներ են ստացվել նաև վեգիտացիւն փորձերի ժամանակ, ուր համեմատվել են կիրազուր և ամմոնիուլֆատը: Այս փորձերը դրված են Միզերլիխի անոթներում, յուրաքանչյուր անոթն ստացել ե 1 գրամմ ազուր, փորպես կիրազուր կամ ամմոնիուլֆատ և 1 գրամմ  $\text{P}_2\text{O}_5$  փորպես սուլֆերֆուֆատ:

1931 թ: ՎԵՐԵՑԱՅՈՒ, ՓՈՐՉԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՆԵՐ 3

Հեղեղը	Հատիկ գրամ-ներով			Մոռու գրամ-ներով			Ենդի. բերք գրամների			$\frac{\text{Ենդ}}{\text{Հեղ}}$
	O	N4	Nω	O	N4	Nω	O	N4	Nω	
1. Յերեան	0,77	21,55	16,08	1,88	26,90	24,38	2,58	48,45	40,46	18:83,5
2. Վաղարշապատ	0,33	19,00	14,81	1,98	27,29	27,96	2,28	46,29	42,77	100:92,4
3. Հրազդան	1,93	22,18	21,20	4,12	27,07	27,44	6,05	49,25	48,64	100:98,7
4. Կոտայք	2,37	17,92	19,18	4,34	29,79	25,77	6,71	47,71	44,95	100:94,2
5. Լենինական	0,55	24,83	22,85	3,57	29,64	32,83	4,12	54,47	55,68	100:102,2

Ալս աղյուսակի թվերը ցուց են տալիս, վոր վեգետացիոն փորձերում կիրազոտը դաշտավին Մջանի հողերում ավելի լավ ե ազդում, քան ամմոնիումսուլֆատը, ըստ վորում նրանց ազդեցությունն երը միմյանց հարաբերում են վորպես 100:91,5-ին: Ալս հարաբերությունը սական, վորում չափով, վորփոխության ե լենթարկվում, յերբ մենք դաշտային շրջաններից բարձրանում ենք դեպի նախալեռնալին և լեռնալին շրջանները. այսպես, կոտաքի հողերում արդեն կիրազոտի ազդեցությունը հարաբերում ե ամմոնիումսուլֆատի ազդեցությանը, վորպես 100:94, 3-ին, իսկ լենինականում դրությունը բոլորովին փոխվում ե, այստեղ ամմոնիումսուլֆատը գերազանցում ե կիրազոտին և նրանց հարաբերությունը դառնում ե արդեն 100:102,2:

1931 թվի վիգետացիոն փորձերը, ընդհանուր առմամբ, հաստատում են 1929 և 31 թվերի փորձերի արդյունքները, ըստ վորում կիրազոտը հայաստանի կիրազական և հողալին պարագաներում կամ դերազանցում ե ազոտի մոլոր պարաբանիութերին կամ իր ազդեցությամբ նրանցից յետ չի մնում:

Ալս լեռնություն մասամբ կարելի յե բացառել նրանով, վոր կիրազոտի մեջ լեղած ազոտը մի փոքր ավելի դանդաղ է նիտրիֆիկացիաի

յենթարկվում, հետեապես նա հողի մեջ ուժեղ կերպով կլանվում ե և վոռոգման ջրերի մեջ չլուծվելով հողից չի լվացվում: Մինչդեռ մթւապարաբանյութերի ազոտը կամ հենց նիտրատի ձեւ ունի (սալպետեր) կամ արագորեն նիտրիֆիկացիաի յե լենթարկվում և դառնալով նիտրատ՝ հողերից հեշտությամբ լվացվում ե:

Սակայն միայն սրանով բացատրել կիրազոտի ազդեցությունը հայաստանի հողերի բերքատվության վրա՝ չի կարելի, մանավանդ, վոր վիգետացիոն փորձերի ժամանակ ազոտի՝ հողից հեռացում տեղի չի ունենում: Այստեղ պետք ե ուրեմն ավելացնել նաև կիրազոտի այն միջանի նպաստավոր ազդեցությունները, վորպիսիք նա անում ե հողերի վրա, մանավանդ ծանր կավացին հողերի վրա, ինչպես հողի փխրացում, նրա մասնակի ստերիլիզացիա, մնասատուների վոչնչացում և այլն.





«Ազգային գրադարան




NL0291712

17. 465

4160 25 №14. (1<sup>1/2</sup> л.)

543  
324  
УА.149



П. КАЛАНТАРЯН

ЦИАНАМИД КАЛЬЦИЯ И ЕГО ПРИМЕНЕНИЕ  
В СЕЛЬСКОМ ХОЗЯЙСТВЕ

Госиздат ССР Армении  
Эривань—1932